ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հասարակագիտություն

(առարկա)

ԹԵՄԱ՝ <<Ակտիվ ուսումնառությունը հասարակագիտության դասին>>

Կազմեց Լուսինե Նիկոլայան Արմենի

(անուն, ազգանուն, հայրանուն)

Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ՄերիՄարտիրոսյան

<<Կապանի N2 ավագդպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ1.Ուսուցման մեթոդներ…… 4

Գլուխ2.Կառուցողական մոտեցումը և ակտիվ ուսումնառությունը……7

Գլուխ3.Ակտիվ ուսուցման մեթոդ……9

Գլուխ4.Ակտիվ ուսուցման մեթոդները հասարակագիտության դասին……10

Հավելված

Եզրակացություն……18

Օգտագործված գրականության ցանկ……20

Ներածություն

Երեխան ոչ թե դատարկ սափոր է,որը պետք է լցնել,այլ ջահ է,որը պետք է վառել:

Մարկոս Ֆաբիոս Քվինթիլիանոս

Մանկավարժության մեջ ուսուցման-ուսումնառության նպատակի հիմնախնդիրը միշտ էլ եղել է կարևորագույններից մեկը:Ուսուցման նպատակը կախված հասարա- կության պահանջներից,սոցիալ-տնտեսական պայմաններից անընդհատ փոփոխ- վում է:

21-րդ դարում՝ հարափոփոխ աշխարհում, գլոբալիզացիայի և ինֆորմատիզա ցիայի պայմաններում ժամանակավրեպ է առաջնորդվել ուսուցման ավանդական մեթոդներով:Այսօր անհրաժեշտ է այնպիսի ռազմավարության մշակումը,որը կնպաս- տի աշակերտների ինքնուրույն վերլուծական կարողությունների, դատողությ ունն-ի, ստեղծագործական մտածողության զարգացմանը:Դրան մեծապես նպաստում է ակտիվ ուսուցման կազմակերպումը իր տարաբնույթ մեթոդներով,որոնք հնարա-վորություն են տալիս աշակերտներին ընդգրկել դասապրոցեսին,մեծացնում է հետա- քրքրասիրությունը,ապահովում է անհատական աշխատանքը և նպաստում է կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝

- ուսումնասիրել ակտիվ ուսումնառությունը
- նշել մեթոդների առանձնահատկությունները
- բացահայտել մեթոդների արդյունավետությունը հասարակագիտության դասին

Նպատակին հասնելու համար առաջադրել եմ հետևյալ խնդիրները՝

1.ուսումնասիրել հետազոտվող նյութին առնչվող գրականություն

2.տարբերկել ուսուցման մեթոդները՝ակտիվ, պասիվ,ինտերակտիվ

3.բացահայտել ակտիվ ուսումնառության և կառուցողականության կապը

4.դասակարգել ակտիվ ուսումնառության մեթոդները

5.կիրառել ակտիվ ուսուցման մեթոդները պատմության դասին և կատարել վերլուծություն

Հետազոտության ընթացքը՝

Փորձարարական հետազոտությունն անց եմ կացրել Կապանի թիվ է10 միջնակարգ դպրոցում:

Աշխատանքի կառուցվածքը՝

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից,հավելվածից,եզրակացությունից,գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

Ուսուցման մեթոդներ

Ուսուցման մեթոդներ (հուն. ՝ μέθοδος_ ճանապարհ), փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում). կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և աշակերտի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի[1]1, հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:Ուսուցման մեթոդները, դասակարգվում են ըստ մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասիվ, ակտիվ,

[1]https://hy.wikipedia.org

ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Պասիվմեթոդ

Պասիվ մեթոդ (սխեմա 1), սովորողիևդասավանդողիփոխադարձգործունեությանձև, որտեղդասավանդողըգլխավորդերակատարնէ ևդասիընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների ևսովորողիկողմիցուսումնականնյութիյուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, չնայած դրան, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս առավելությունները՝ շատ դասավանդողներ պասսիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբսովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը:

Սխեմա 1, Պասսիվ մեթոդ

Ակտիվմեթոդ

Ակտիվ մեթոդ[2](սխեմա 2), սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին: Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:

Սխեմա 2, Ակտիվ մեթոդ

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ (սխեմա 3)

Ինտերակտիվ («Inter» - փոխադարձ, «act»- գործել), նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Սխեմա 3, Ինտերակտիվ մեթոդ

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը,

[2] https://hy.wikipedia.org

իսկանձըզարգանումէգործունեությանմեջ:Ակտիվմեթոդներիհիմքումընկածէերկխոսությունը, ինչպեսուսուցչիևաշակերտներիմիջև, այնպես էլ իրենց,աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են աշակերտների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՈՒՄ-ը բնութագրվում է աշակերտների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՈՒՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են աշակերտների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ԱՈւՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման

ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, աշակերտների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ԱՈՒՄ-ի կիրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից[3].

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,

  Կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Աշակերտի հաղորդակցական-զգայականոլորտիզարգացում,
- Աշակերտի զարգացում անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

ԳԼՈՒԽ 2

Կառուցողական մոտեցումը և ակտիվ ուսումնառությունը

Կառուցողականության /կոնստրուկտիվիզմի/ գաղափարն սկիզբ է առել դեռևս Սոկրատից:18-րդ դարում այս տեսության <<պիոններից >> է եղել Ջամբատիստա Վիկոն:Այդ տեսության հետագա մեկնաբանությունը տվել է էմանուել Կանտը[4]:

Ժամանակակից մանկավարժության մեջ <<ակտիվ ուսուցում>> տերմինն առավելապես կապվում է կառուցողականության հետ:Կառուցողականությունը ինքնակարգավորվող գործունեություն է ,որը գաղափարական կառույցներ է ստեղծում

[3]https://hy.wikipedia.org

[4]Զոհրաբյան Ա.,Հովհաննիսյան Գ., Արնաուդյան Ա., Կառուցողականկրթությանհիմունքները և մեթոդները,Երևան 2004, էջ 46

դատողությունների և վերացարկման միջոցով:Այն ակտիվ գործընթաց է և յուրաքանչյուր տվյալ պահի նոր ընկալումները ձևավորվում են սովորողի գիտակցության մեջ արդեն գոյություն ունեցող գիտելիքների կառույցում:

Կառուցողականության տեսությամբ առաջնորդվող դասավանդումը նախ և առաջ աշակերտներից պահանջում է մտավոր ակտիվության մշտական դրսևորում:Ուսումնասիրության և քննարկումների համար ընտրված երևույթները պետք է հետաքրքիր լինեն,զարգացնող բնույթ ունենան,որպեսզի արդարացվի իրենց վրա ծախսված ժամանակը[5]:

Ըստ Դրայվերի կառուցողական ուսուցման քայլերն են.

- կողմնորոշում
- հարց ու պատասխան /երկխոսորթյուն/
- մտքերի վերակառուցում
- վերադիտարկում

Կառուցողական մոտեցումը ուսուցում-ուսումնառությունը դիտարկում է որպես հասարակական և մշակութային ակտիվություն,համարում է .որ գիտելիքները խիստ անհատական են,և սովորողները պատկերացում են կազմում այս կամ այն երևույթի մասին իրենց փորձի,մյուսների հետ համագործակցելու և այլնի միջոցով:Այստեղ ուսուցման-ուսումնառության հիմնական նպատակն է օգնել երեխային՝ գտնելու իր տեղը այն հասարակության մեջ,որտեղ ապրելու է,նպաստել նրա ինքնիրագործ-մանը:Ուստի այս պարագայում առաջնային են դառնում ուսուցման կազմակերպման ձևերն ու մեթոդները և կիզակետում դրվում է ոչ թե <<ի՞նչ սովորեցնել>>,այլ <<ինչի՞ համար սովորեցնել>>,այսինքն՝ ուսուցման նպատակը,և ուսուցչի հիմնական ուշադրությունն ուղղվում է ոչ այնքան ուսումնական նյութի,որքան աշակերտի,նրա ուսումնական գործունեության վրա:Այսպիսով ուսուցման –ուումնառության մեթոդը պայմանավորվում է նպատակով,որն,իհարկե,պետք է հաշվի առնի ընդհանրապես մարդու և մասնավորապես երեխայի սովորելու

[5]Զոհրաբյան Ա.,Հովհաննիսյան Գ., Արնաուդյան Ա., Կառուցողականկրթությանհիմունքները և մեթոդները,Երևան 2004,էջ 48

հնարավորությունները,այն ,թե ինչպես է մարդը սովորում[6]:Ակտիվ ուսուցման հետ կապված բոլոր տեսություններն ու տեխնոլոգիաներն ունեն մի ընդհանրություն՝դրանց նպատակն է վեր հանել ու զարգացնել սովորողների ներուժը,զարգացնել նրանց մտածողությունը,նպաստել որոնողական աշխատանքների զարգացմանը,ձևավորել կայուն գիտելիքներ,սովորեցնել այդ գիտելիքները կիրառելկյանքում,ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ:Այս ամենն իրականացնելու համար անհրաժեշտ է,որ ուսուցիչը ինքը նույնպես ունենա այս որակները և դասը ընկալի `որպես ստեղծագործական գործընթաց:

ԳԼՈՒԽ 3

Ակտիվուսուցման մեթոդներ

Ակտիվ ուսուցման մեթոդներ են կոչվելու ուսումնական աշխատանքների կազմակերպմանն ու կառավարմանն ուղղված գործողությունների այնպիսի համակարգ ,որի ընթացքում սովորողների ոչ միայն իմացական ,այլ նաև անձնային համակողմանի ներգրավման շնորհիվ ինտենսիվանում ,ակտիվանում և ավելի արդյունավետ է դառնում նրանց անհատական և խմբային գործունեությունը[7]:

Խմբային աշխատանքի ընթացքում ուսուցիչների համակողմանի ակտիվացումը կարող է օգնել նրանց ինքնադիտարկման,ինքնաընմբռնման և ինքնազարգացման հարցերում:

Ակտիվ ուսումնառության մեթոդներըպայմանականորեն բաժանվում են 2 հիմնա-կան խմբի՝ոչ նմանակային և նմանակային /ոչ իմիտացիոն և իմիտացիոն/[8]:

Ոչ նմանակային մեթոդները չունեն ուսումնասիրվող երևույթի նմանակման կաղապար:Ոչ նմանակային մեթոդներ կարող են համարվել,օրինակ,կլոր սեղանը,պրոբլեմային

---

[6]. Աստվածատրյան Մ.,Արնաուդյան Ա., Ուսուցիչների վերապտրաստան գործընթացի կատարելագործումը , Երևան 2003, էջ 245

[7]. Աստվածատրյան Մ.,Արնաուդյան Ա., Ուսուցիչների վերապտրաստան գործընթացի կատարելագործումը , Երևան 2003,, էջ 315

[8].Նույն տեղում,էջ 316

դասախոսությունը, բանավեճերը, խմբային կոնսուլտացիաները,դիպլոմային աշխատանքները,որոնք ապահովում են մասնակիցների ակտիվությունն ու ինքնուրույնությունը: Նմանակային հիմնական տարբերակիչ գիծը կոլեկտիվ մասնագիտական գործունեության նմանակումն է,որը իր հերթին բաժանվում է 2 խմբի՝ոչ խաղային /ա. կոնկրետ իրավիճակների վերլուծություն և բ.նմանակային վարժություն/և խաղային մեթոդների /գործարար խաղեր և դերային խաղեր/:

Հետազոտություններըցույց են տվել, որ

Երբ դուք ինչ-որ բան կարդում եք՝ հիշում եք 10%

Երբ դուք ինչ-որ բան լսում եք՝ հիշում եք 20%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում եք՝ հիշում եք 30%

Երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք հիշում եք 50%

Երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում՝ հիշում եք 90%-ը[9]:

ԳԼՈՒԽ 4

Ակտիվ ուսուցման մեթոդները հասարակագիտության դասին

Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել եմ մի շարք մեթոդներ՝անկյուններ,կարուսել,խմբային աշխատանք, կենտրոններով աշխատանք,զույգերով աշխատանք,գծապատկերներ,աղյուսակնե,դիագրամներ:

<<Գեղագիտություն >> թեմանուսումնահիրելիս կիրառել եմ <<Կենտրոններով աշխատանք>>:

Կենտրոններով աշխատանք-խմբային աշխատանքի ձև է,յուրաքանչյուր խմբի տրվում է համապատասխան հանձնարարաություն.

1-ին խումբ՝բացահայտողների կենտրոն- ծանոթանում է տեքստին,կատարում նշումներ,առանձնացնում հիմնական միտքը և ներկայացնում ընկերներին:

[9] https://hy.wikipedia.org

2-րդ խումբ՝հետազոտողների կենտրոն-այլ աղբյուրներից ՝համացանցից կամ սկզբնաղբյուրից նոր փաստեր էգտնում: Օգտագործվեց Ն.Ադոնցի դասագրքի նյութը և համացանցը:

3-րդ խումբ՝ստեղծագործողների կենտրոն-որևէ կերպ վերարտադրում է դասը.կազմվեց դասի գծապատկերը:

4-րդ խումբ՝գրավոր աշխատանքների կենտրոն- գրում է հարցերի պատասխանները և կազմում է աղյուսակ:

Օրվա դասի պլան

Առարկա՝ Հասարակագիտություն

Դասարան՝ X

Թեմա՝ Գեղեցիկը արվեստի տարբեր բնագավառներում

Դասի տիպը՝ համակցված

Դասի նպատակը՝ Երեխաների մոտ խորացնել նոր գիտելիքներ, արվեստի տարբեր ճյուղերի վերաբերյալ

Դասի խնդիրները՝

1.Կրթական

- Իմանալ՝ի՞նչ է արվեստը, արվեստի ճյուղերը
- Կարողանալտարբերակելարվեստի ճյուղերը
- Հմտանալթեմայիմեջ, իմանալ տեսականմասը

Ցանկալի է, որաշակերտները ունենան նաև լրացուցիչ տեղեկություններ:

2.Դաստիարակչական

- Խթանել երեխաների ստեղծագործ մոտեցումը թեմային
- Ստեղծել միջավայր, որը թույլ կտա նրանց ազատ խոսել տվյալ թեմայի շրջանակներում
- Սովորեցնել լսել ընկերներին և հարգել նրանց կարծիքը
- Սովորեցնել աշխատել թիմով

3.Ճանաչողական

- Խոսքի, մտածողության զարգացում
- Մտավոր աշխատանք(վերլուծությունանելուունակություն, եզրահանգումներ անելու կարողություն):

Անհրաժեշտ սարքավորումները

- Պրոյեկտոր
- Համակարգիչ

- Գրատախտակ
- Քարտեր
- Աղյուսակներ

Դասի նպատակը

1. **Կազմակերպչական մաս-**5 րոպե
   Դասի այս փուլում ուսուցիչը՝ երեխաներին պատրաստում է թեմայի շուրջ քննարկումներին
2. **Գործնական աշխատանք**
   Աշակերտները բաժանվում են 4 խմբի և դիտում են ուսուցողական հոլովակը: Այնուհետև կարդում են տեղեկություններ արվեստի տարբեր ճյուղերի վերաբերյալ:

- Դեկորատիվ –կիրառական արվեստ
- Ճարտարապետություն
- Գեղանկարչություն
- Հեռուստատեսություն
- Գրականություն

3.Նյութը ուսումնասիրելուց հետո յուրաքանչյուր խումբ իր հանձնարարված մասը պետք է այնպես ներկայացնի, որ մնացած խմբերի համար լինի պարզ և մատչելի:

4.Դասի ամփոփումը

Ուսուցիչը և աշակերտները միասին ամփոփում են դասը, թե ինչ սովորեցին և քննարկեցին դասի ընթացքում:

Վերջնաարդյունք. Այս դասը ուսումնասիրելով՝ աշակերտները կիմանան՝ ի՞նչ է արվեստը, որոնք են արվեստի ճյուղերը, կկարողանան նաև տարբերակել արվեստի նոր և նորագույն ճյուղերը:

Եզրակացություն

Ժամանակակից աշխարհում կրթության դերը օրըստօրե մեծանում է:Մենք մուտք ենք գործել տեղեկատվական հասարակություն ,որտեղ գործում են նոր կանոններ և տեղի են ունենում արագընթաց փոփոխություններ,որոնք ընդգրկում են նաև կրթական ոլորտը:Այդ փոփոխությունները ուսուցչից պահանջում են մասնագիտական մեծ պատրաստվածություն և որակներ,որպեսզի դիմակայի նոր մարտահրավերներին և պատվով հաղթահարի դրանք:Ուսուցման գործընթացի հիմքում դրվում է 3 կարևոր հիմնահարց.

- .ուսուցման նպատակը /ինչո՞ւ սովորել/սովորեցնել/
- .ուսուցման բովանդակությունը /ի՞նչ սովորել/սովորեցնել/
- .ուսուցման ռազմավարությունը,ձևերը ,մեթոդները /ինչպե՞ս սովորել/սովորեցնել/

Իմ կողմից իրականացված տեսական և գործնական հետազոտությունը ,որի նպատակն էր բացահայտել ակտիվ ուսուցման էությունը և մեթոդների առանձնահատկությունները ու արդյունավետությունը հասարակագիտության դասին ,թույլ է տալիս գալ հետևյալ եզրահանգումներին.

- .ակտիվ ուսուցման մեթոդները բազմազան են, արդյունավետ և հետաքրքրքշարժ
- .նպաստում են աշակերտների ներգրավվմանն ու ինքնահաստատմանը
- .ապահովում են աշակերտակենտրոն ուսուցումը
- .հնարավորություն են տալիս բացահայտելու աշակերտների կարողություններն ու հնարավորությունները
- .նպաստում են ոչ միայն գիտելիքի յուրացմանը,այլև աշակերտների մոտ մի շարք կոմպետենցիաների ձևավորմանը

Կիրառած մեթոդների շնորհիվ բացահայտել եմ,որ սովորողն այնպիսի իրավիճակներում է հայտնվում,որ ինքն է ուզում կարդալ,խոսել,մտածել,խնդիրներ լուծել և այլն: Այս ամենն էլ նպաստում է բարդ, տրամաբանական այնպիսի գործողություններիկատարմանը,ինչպիսին է վերլուծություն,համեմատություն,քննարկում,կիրառում:

Սակայն հարկ է նշել,որ հետազոտական աշխատանքի արդյունքում պարզվեց ,որ մեթոդի արդյունավետությունը կախված է աշակերտների կարողություններից և ըստ այդմ կազմված խմբերից,օրինակ՝<<Կենտրոններով աշխատանք>> կիրառելով 2 զուգահեռ դասարաններում՝ նույն պատկերը չունեցա: 9ա դասարանում խմբերը ձևավորեցի 1-4հաշվելով,այսինքն՝պատահականության սկզբունքով,9բ դասարանում խմբերը ձևավորեցի ըստ աշակերտների կարողությունների: 9բդասարանում աշխատանքը ավելի արդյունավետ ստացվեց:Այստեղից հետևություն. նպատակահարմար է խմբերը ձևավորել ըստ կարողությոունների,իսկ խմբի ներսում բոլոր անդամների ներգրավվածությունը ապահովելու համար առաջադրանքները տալ տարբերակված ձևով:

10-րդ դասարանում <<Գեղեցիկը մեր ամենօրյա կյանքում>> դասի յուրացման համար կիրառվել է <<Շրջված դասարան >> մեթոդը: Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց,որ որոշ աշակերտներ դասարանում ուսուցչի վերահսկողության պայմաններում , որոշակի գիտելիքներ են ձեռք բերում,ստիպված կատարում են տրված հանձնարարությունները,որին նպաստում է դասընկերների աջակցությունը և համատեղ աշխատանքը, իսկ այս պարագայում դա բացակայում է:Այս մեթոդը նպատակահարմար եմ գտնում կիրառել այն աշակերտների հետ, որոնք ունեն մեծ պատասխանատվություն և ի վիճակի են ինքնուրույն յուրացնել նոր նյութը:

Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել եմ աղյուսակներ,գծապատկերներ, նպատակ

ունենալով,աշակերտների մոտ զարգացնել վերլուծական միտքը և սեփական մտքերը գրագետ շարադրելու հմտություններ:Այս մեթոդները դասը դարձնում են առավել հետաքրքիր և հնարավորություն են տալիս պատկերացում կազմել աշակերտների կողմից դասի յուրացման մակարդակը:

Ակտիվ ուսուցումը ոգևորում է աշակերտներին,այն հնարավորություն է տալիս նրանց սեփական տեսակետները արտահայտելու,ինքնահաստատվելու:Վերջինիս նպաստում է այն հանգամանքը,որ սխալները քննարկվում և ուղղվում են համատեղ:Սխալ կատարելը համարվում է ուսման գործընթացի բաղկացուցիչ մաս:

Կարևորելով ակտիվ ուսուցման արդիականությունը,անհրաժեշտությունը,որտեղ աշակերտը հանդես է գալիս որպես ուսումնառության սուբյեկտ,չենք կարող անտեսել ավանդական ուսուցումը Հայստեղ հարկ է նշել Դեվիդ Նունանի գրառումը.<<Ցանկացած փոփոխություն նախատեսելիս՝ մեր նպատակն է ոչ թե դեն նետել հին գործելակերպը,այլ համադրել այն նորի հետ>>:

Օգտագործված գրականություն

Հովհաննիսյան Գ.,Զոհրաբյան Ա.,Արնաուդյան Ա,Գրիգորյան Ք.,Դավթյան Մ.,Օհանովա Ի.,Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները,<<Տիգրան Մեծ>>,Երևան 2004

Դավթյան Մ.,Օհանովա Ի., Հովհաննիսյան Գ.,Զոհրաբյան Ա.,Արնաուդյան Ա,Գրիգորյան Ք.,Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, <<Այռեքս>>,Երևան 2004

Աստվածատրյան Մ.,Օվանովա Ի.,Արնաուդյան Ա.,Վարդումյան Ս.,Պետրոսյան Ռ.,Երեմյան Լ.,Թորոսյան Կ.,Թերզյան Գ.,Սարգսյան Ս.,Դալլաքյան Ա.,Ավանեսյան Վ.,Պետրոսյան

Մ.,Սարգսյան Ա.,Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը,<<Այռեքս>>,Երևան 2003

Պետրոսյան Ա.Խաչատրյան Ս.Խաչատրյան Հ,Առաքելյան Մ.,Արնաուդյան Ա.,Զոհրաբյան Ա.,Գ.Ֆ.Վարելլա,Հասարակագիտության ինտեգրված ուսուցում,<<Լուսաբաց>>,Երևան 2006

էլ.պաշար

https://library.fes.de/

https://hy.wikipedia.org/